

## Այս համարում

### Հայերեն բաժին

- 1- Հայերի տեղահանությունը.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք .....4
- 3- Լուրեր – Հայաստան.....5
- 4- Լուրեր – Իրան.....5
- 5- Հասարակական.....5
- 6- Խոհեր .....8
- 7- Մշակույթ .....9
- 8- Ջանազանք.....13

### Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանահայ համայնք .....1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2



#### Ճապիկի առաջին էջում`

Խաչքար - Ախթամար կղզի – Վանա լիճ

#### Ճապիկի վերջին էջում`


Հայերի աքսորը Սուրիայի անապատներ, 1915թ.



Համար 150, Ապրիլ 2009թ.

No. 150, April 2009

ماهنامه لویس – شماره ۱۵۰ اردیبهشت ماه ۱۳۸۸



## «ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՈՆԻԶՄԻ ՄՏԱՀՂԱՑՈՒՄՆ ԷՐ. ԱՅԼԱՊԵՍ ԱՆՀՆԱՐ ԿԼԻՆԵՐ ՀՐԵԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՑ ԹՈՒՐԵԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՌԱՅԵՑՆԵԼ ՀՐԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԻՆ»

Քենալական Աթաթուրքի ժամանակակից թուրքիան դեռևս կազմավորման օրից մերժել է այն, ինչ Օսմանյան կայսրության ժառանգությունն էր՝ պետական, կրոնական, դատաիրավական համակարգերը, պատմությունը, մշակույթը, այբուբենը, կենցաղը, նույնիսկ հագուկապը: Թերևս Հայոց ցեղասպանության հարցում է, որ թուրքիայի Հանրապետությունը պաշտպանության տակ է առնում Օսմանյան կայսրությանը: Ինչ վերաբերում է երիտթուրքերին, որոնք կայսրությանը ներքաշելով Աշխարհամարտի մեջ, նրա կործանման պատճառը դարձան, ապա նրանց առաջնորդներն՝ ի դեմս Թալեթի, Էնվերի, Ջեմալի, հերոսի դափնեպսակի են արժանանում թուրքիայում: Մինչդեռ վերջիններս Աթաթուրքի քաղաքական մրցակիցներն էին:

Նրանց չեզոքացումից հետո մրցակցության հանգամանքը վերացավ: Քենալ Աթաթուրքը, նրա մերձակա շրջապատը, առավել եւս հաջորդները՝ մասնավորապես նախագահներ Իսմեթ Ինյունյուն ու Ջելալ Բայարը, որոնցից առաջինը մասնակցել է հայերի, իսկ երկրորդը՝ հույների բնաջնջմանը, ձեռնամուխ եղան արդարացնելու երիտթուրքերին հատկապես Հայոց ցեղասպանության հարցում: Թուրքական ժխտողականությունը հենց արդարացման նկրտումների խտացված արտահայտությունն է:

Դա ունի բազմաթիվ պատճառներ, զլխավորը թերևս Քենալ Աթաթուրքի իթթիհատական պատկանելությունն էր, ինչպես նաև հայազգի դահիճների առանցքային դերը քենալական շարժման մեջ: Նրանք այնուհետև դարձան թուրքիայի Հանրապետության հիմնադիրները, որոնց հենքի վրա էլ երկրում ձեւավորվեց առանձնաշնորհյալ ընտրախավը: Թուրքիայում Աթաթուրքը դեռևս տաբու է: Առայժմ պահպանվում է նաև քենալիզմի անձեռնմխելիությունը: Սակայն երկրում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններին զուգընթաց ակտիվանում են իսլամականները: Նրանք սկսում են եթե ոչ Աթաթուրքի, ապա գոնե քենալականների գործունեությունը ենթարկել քննության՝ հիմք ընդունելով վերջիններիս սաբաթայական (այսպես են անվանում սալոնիկյան ծագումով առերևույթ կրոնափոխ հրեաներին) ծագումը: Թուրքիայի Հանրապետության ստեղծումը վերագրում են համաշխարհային սիոնիզմին, իսկ հայերի բնաջնջումը՝ դիտարկում որպես սաբաթայականների ծրագիր: Ինչո՞ւ: Այս եւ մյուս հարցերին փետրվարի 18-ին «Հրեական ամբարտավանություն» հոդվածով պատասխանում է

իսլամական «էլ Ազիզ» շաբաթաթերթը: Ինչ խոսք, չենք կարող անվերապահորեն ընդունել հողվածում Հայոց ցեղասպանության մասին արտահայտված մտքերը, սակայն մոտեցումը յուրօրինակ է, նոր եւ ինքնին երեւոյթ թուրքական իրականության մէջ:

«Հայոց ցեղասպանության պնդումն. անջատողական PKK-ի ահաբեկչությունն ու Կիպրոսի հարցն ազգային հիմնախնդիրներ են, ունեն միջազգային հնչեղություն եւ տասնյակ տարիներ զբաղեցնում են թուրքիային: Մեր ազգային հիմնախնդիրների նկատմամբ Իսրայելի հետաքրքրությունը կոնյունկտուրային մոտեցում չէ: Այս երեք հիմնախնդիրների հետեւում ի սկզբանէ կանգնած է եղել հենց Իսրայելը: Թերեւս պատահական չէ, որ այդ հիմնախնդիրներն ի հայտ են եկել եւ թուրքիայի համար դժվարություններ են հարուցել 70-ականների սկզբներից, երբ երկրում նկատելի դարձավ «խորքային պետության» ազգային թելի ազդեցությունը:

Իրավիճակը նախ սրվեց Կիպրոսում... Ապա երկրում բռնկվեցին աջակողմյան-ձախակողմյան, ալալի-սուննի, թուրք-քուրդ բախումները... Դրանց հետեւեց հայկական ԱՍԱԼԱ-ի ահաբեկչությունն ու, այսպես կոչված, ցեղասպանության քարոզարշավը... Այս ամենից հետո ասպարեզ իջավ անջատողական PKK-ի ահաբեկչությունը... Այս երեք հիմնախնդիրները հիմնականում թուրքիայի գլխին փաթաթել են Իսրայելն ու համաշխարհային սիոնիզմը, իսկ փաթաթելու որոշումը դեռեւս ընդունվել է 1897-ին Շվեյցարիայի Բազել քաղաքում գումարված Սիոնիզմի համաշխարհային կոնգրեսի որոշումներին համապատասխան:

**Այսպես կոչված ցեղասպանության հարցը**

Յետամուտ լինելով Բազելի կոնգրեսի որոշումներին, համաշխարհային սիոնիզմն Անգլիայի եւ դաշնակիցների միջոցով կործանեց Օսմանյան կայսրությունը, սառեցրեց Սելի ծրագիրը եւ իր սպասարկուներին կարգադրեց հիմնադրել թուրքիայի Հանրապետությունը, որպեսզի Պաղեստինում հնարավոր լինի հրեական պետության ստեղծումը:

Հանրապետության ստեղծումը կարգադրվեց առերեւոյթ կրոնափոխ հրեաներից կազմավորված սաբաթայական տարրերին, որպեսզի թուրքիան առանց ոտքը կախ զցելու եւ խնդիրներ հարուցելու ծառայի այս (հրեական պետության ստեղծման) նպատակին: Իսկ դրա համար անհրաժեշտ էր աշխարհագրական տվյալ միջավայրը գտել նրա երկու հին եւ ազդեցիկ հասարակությունը կազմող հայ ու հույն բնակչությունից: Այլապես անհնար կլիներ եվրոպական երկրների եւ Ռուսաստանի աջակցությունը վայելող քրիստոնյա այս երկու հասարակություններին կառավարման համակարգից օտարելու միջոցով, որպես հրեական քողարկված պետություն թուրքիայի Հանրապետության ստեղծումը:

Քանի որ այս հանգամանքը մտածված էր ի սկզբանէ, ուստի փոխանակման միջոցով նախ Անատոլիայից

Հունաստան քշվեց հույն բնակչությունը: Հույների փոխարեն Բալկաններից տեղափոխեցին սաբաթայական համայնքի կրիպտո հրեաներին եւ բնակեցրին մահմեդականի անվան տակ: Փոխանակման շնորհիվ փաստորեն հաջողվեց մի քարով երկու թռչուն խփել: Այն առումով, որ Անատոլիան դատարկվեց հույներից, իսկ Բալկաններից եկած սաբաթայականների վերաբնակեցմամբ աննախադեպ աճեց հրեաների քանակը թուրքիայում, այսպիսով ապահովվեց ապագա հանրապետության կազմավորման եւ կառավարման համար կադրերի անհրաժեշտ կազմը: Նույն նպատակով էր իրագործվել նաեւ դրան նախորդած հայերի տեղահանությունը:

Ներկայումս Իսրայելի եւ ԱՄՆ-ի հրեական կառույցների ձեռքին գործիք դարձած հայկական սփյուռքի միջոցով հակաթուրքական քարոզարշավի վերածված ցեղասպանության հայկական պնդումների համար հիմք հանդիսացող տեղահանությունը մտահղացումն է սաբաթայական հրեաների, որոնք երկրում իշխանությունն իրենց ձեռքն էին վերցրել Իթթիհատ վե թերաքի կուսակցության կառավարման եւ սահմանադրական միապետության շրջանում:

Պաշտոնական փաստաթղթերը վկայում են, որ Անգլիան եւ դաշնակիցները տեղահանության ձեռնարկումներում աջակցել են Անատոլիան հայ բնակչությունից զտող առերեւոյթ կրոնափոխ հրեաների ստեղծած Իթթիհատ վե թերաքի կուսակցությանը: Փաստաթղթերը մի կողմ, տեղահանությունից մոտ մեկ դար հետո Հայոց ցեղասպանության բացականչություններով աշխարհն իրար խառնող Արեւմուտքը տեղահանության ընթացքում բերանը ջուր առած դիտողի դերում էր: Չգիտես ինչու, սփյուռքահայերը ոչ մի կերպ չեն ցանկանում քչփորել Արեւմուտքի այդօրվա քար լռությունն ու դիտորդի դերում հանդես գալու պատճառները:

Երբ Անատոլիան փոխանակման միջոցով հույն, տեղահանության միջոցով հայ բնակչությունից զտվեց, իսկ սաբաթայական օլիգարխիայի միջոցով հանրապետության անվան տակ երկրում հաստատվեցին Յակոբինյանի նման բռնատիրական կարգեր, ապա մահմեդական գերակշռող զանգվածն օտարվեց պետական կառավարման համակարգից, դուրս մղվեց եւ դատապարտվեց գյուղական վայրերում խղճուկ գոյություն պահպանելու:

Ինչ վերաբերում է Ստամբուլի այն հայերին ու հույներին, որոնք ազատվել էին տեղահանությունից եւ փոխանակությունից, ապա նրանց էլ ազգային փոքրամասնությունների համար հատուկ նշանակված ունեցվածքի հարկով (1941) ստիպեց երկրից հեռանալ Ինյոնյուի (Թուրքիայի երկրորդ նախագահ) ժողովրդահանրապետական կուսակցության իշխանությունը: Եթնիկ զտման այս քաղաքականությունը նույնությամբ շարունակեց Դեմոկրատական կուսակցության

իշխանությունը, որի օրոք 1955-ի սեպտեմբերի 6-7-ին պետականորեն կազմակերպված կողոպուտի եւ կոտորածների թիրախ դարձած հայ եւ հույն բնակչությանը ահ ու սարսափ պատճառելով՝ ստիպեցին, որ փախչի երկրից: Աշխարհի հրեաներին Իսրայելում բնակեցնելու սիոնիզմի ծրագրին համապատասխան, նախադրյալներ ստեղծվեցին, որ ունեցվածքի հարկից եւ սեպտեմբերի 6-7-ի խժոժություններից տուժեն նաեւ Ստամբուլի այն հրեաները, որոնց ազգային ինքնությունը բացահայտված էր: Այդ ընթացքում սաբաթայական կոչվող կրիպտո հրեաները, որոնց Իսրայելը չի ընդունում, առավելագույնս օգտվելով առիթից, բազմապատկեցին իրենց անաշխատ եկամուտներն ու ինչպես հարկ է թմփոշացան:

Հատկանշական է, որ արեւմտյան տերությունների երկերեսանիությունից բխող ողջամտությունը մեր օրերում թուրքիայում պետականորեն իրականացված ունեցվածքի հարկի եւ սեպտեմբերի 6-7-ի խժոժությունների նման մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ, բառիս բուն իմաստով, խայտառակություն էր: Մի՞թե Արեւմուտքը լռությամբ կշրջանցեր հույների եւ հայերի նկատմամբ այս genocide-ը, եթե դրա իրագործումը սաբաթայական օլիգարխիային հանձնարարած չլիներ համաշխարհային սիոնիզմը»:

ՀԱՎՈՐ ՉԱՔՐՅԱԼ

**ՕԲԱՄԱՅԻ ԾՆԵՂԱԿԱՅՐ ՐԱՎԱՅԱՆ  
ՆԱՐԱՆԳԸ ՃԱՆԱԳԵՑ ՐԱՅՈՑ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ապրիլի 7-ին, երբ շարունակվում էր նախագահ Օբամայի թուրքիա այցելությունը, ԱՄՆ-ի Հավայան նահանգում Ներկայացուցիչների պալատը միաձայն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Այսպիսով, Բարաք Օբամայի ծննդավայր Հավայան կղզիները դարձել են Ցեղասպանությունը ճանաչող ԱՄՆ-ի 42-րդ նահանգը, որտեղ ապրիլի 24-ը միաժամանակ հռչակվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օր: Օբամայի թուրքիա այցի եւ ծննդավայրի պարագան ճանաչմանը խորհրդանշական բնույթ է հաղորդում:

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՒՆԸ ԸՆԴՐԵՄ  
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ**

«Վարդգես Եղիայան եւ փաստաբանական խումբ» գրասենյակն առաջին անգամ դատական գործ է հարուցել Deutsche Bank եւ Dresdner Bank բանկերի նկատմամբ՝ դրանցում ավանդներ ներդրած ցեղասպանության զոհերի ժառանգների փոխհատուցման նպատակով: Գրասենյակի ղեկավար Վարդգես Եղիայան «Արեւմարեսին» տեղեկացրեց, որ բանկերի հետ իրավական բանակցություններն ընթացել են վերջին երեք տարիների ընթացքում, ակնկալվում է, որ

գործը երդվյալ ատենակալների վճռին կարժանանա 2010-ի ապրիլին: ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում հատուկ օրենք է ընդունվել, որը թույլ է տալիս Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի հայ ավանդատուներին պահանջներ ներկայացնել մինչեւ 2016-ը: Գրասենյակը վարել եւ հաջողությամբ է պսակել ամերիկյան «Նյու Յորք լայֆ» ընկերությունից զոհերի ժառանգների փոխհատուցման գործընթացը: «Վիկտորիա» կյանքի ապահովման գերմանական ընկերության դեմ դատական գործընթացը գրասենյակը բացել էր դեռեւս 2001-ին: «Աքսա» ֆրանսիական ապահովագրական ընկերության դատական գործընթացը գրասենյակը բացել է 2001-ին՝ 2007-ին հաստատվելով 17,5 միլիոն դոլարի չափով: Բրիտանական ապահովագրական ընկերությունների միության՝ AVIVA-ի դեմ եւս դատական գործընթաց է սկսվել:

**ԹՈՒՐԵՒԱՅԻ ՐԱՅ ՐԱՄԱՅՆԸ ԿԱՐԵՎՈՐ  
ԿԱՍՈՒՋ Է**

Թուրքիայի պետնախարար Էգեմեն Բաղըշը Շիշլիի հայկական դպրոցում հանդիպել է թուրքիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ինչպես հաղորդում է «Ջիհան» գործակալությունը, թուրք պետնախարարը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, հայտարարել է. «Մենք դարեր ի վեր այս հողերում կիսել ենք հաց ու ջուր: Միասին ապրել ենք լավ եւ վատ օրեր»: Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին՝ Էգեմեն Բաղըշն ընդգծել է, որ իրենք մեծ կարեւորություն են տալիս Հայաստանի հետ հարաբերությունների զարգացմանը: «Այս հարցում թուրքիայի հայ համայնքին համարում են կարեւոր կամուրջ», ասել է Բաղըշը: Էգեմեն Բաղըշը այցելել է նաեւ «Ակօս» շաբաթաթերթի խմբագրություն եւ հանդիպել թերթի գլխավոր խմբագիր Էթյեն Մահչուվիյանի հետ, հաղորդում է «Նոյյան տապանը»:

**Պիտեր Գաբրիել. «Թուրքիան պետք է  
ձանաչի Հայոց ցեղասպանությունը»**

ԼՈՒԴՈՆ, 10 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Անգլիացի երաժիշտ եւ երգահան Պիտեր Գաբրիելը հայտարարել է, որ թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը շատ կարեւոր է: Թուրքական «Աքշամի» փոխանցմամբ, Լոնդոնում կազմակերպված մամուլի ասուլիսում Գաբրիելն ասել է. «Թուրքերը մերժում են Հայոց ցեղասպանությունը: Անգլիան եւ ԱՄՆ-ը դեռ չեն ճանաչել այն: Սակայն, հուսով եմ, որ այլ երկրների նման, նրանք էլ կձանաչեն հայկական ցեղասպանությունը»:

**ԱՄՆ մի խումբ կոնգրեսականներ նախագահ  
Բարաք Օբայից պահանջել են կատարել  
Հայոց ցեղասպանությունը ձանաչելու մասին  
տված խոստումը**

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ կոնգրեսականներ, դեմոկրատներ Ադամ Շիֆը, Ֆրանկ Փալուենը եւ հանրապետականներ Ջորջ Ռադանովիչն ու Մարկ Կիրկը նախագահ Բարաք Օբամային հղած

համատեղ նամակով պահանջել են կատարել անցյալ տարի նախագահական ընտրությունների շրջանում 1915 թ-ին Օսմանյան կայսրության կողմից իրագործված հայկական ջարդերը «Հայոց ցեղասպանություն ճանաչելու» մասին տված խոստումը:

Նամակում, շնորհակալություն հայտնելով Օբամային «ընտրական արշավի ժամանակ տված խոստման համար», կոնգրեսականներն ասել են, որ «այժմ եկել է խոստումը կատարելու ժամանակը»: «Լինի այսօրվա Սուդանի կառավարությունը, թե երեկվա Օսմանյան կայսրությունը, ցեղասպանություն կատարողներն ու նրանց զոհերը պետք է իմանան, որ ԱՄՆ-ը երբեք չի խուսափելու ճշմարտության հետ բախումից», -ասել են նրանք նամակում:

## Իրանահայ Համայնք

### «ՐաՖՖի» սկաուտները Ռաշտում



Սույն թվականի մարտի 28-ին ՀՄՄ «ՐաՖՖի» համալիրի սկաուտները 60 հոգանոց սկաուտական և իր ծնողական խորհրդի կազմով մեկնեցին Ռաշտ քաղաքի «Հորդանյան Մարիամ» դպրոց անցկացնելու իրենց 29-րդ ընդհանուր սկաուտական բանակումը: Չնայած ցուրտ և անձրևոտ եղանակին ծնողական կազմի աջակցությամբ բանակումը շատ հաջող և աշխույժ ընթացք ստացավ: Սկաուտները սենյակներում տեղավորվելուց հետո անմիջապես անցան բանակավայրի պատրաստման և խմբակային աշխատանքներին:

Բանակումի նշանաբանն էր «Սկաուտը մաքուր հայերեն է խոսում» և շատ ողջունելի է այն փաստը, որ բանակումի ընթացքում հարգելով նշանաբանը ջանաճում էին ճշտել իրենց և իրենց ընկերների բառական և քերականական սխալները խոսելիս:

Ըստ ավանդույթի յուրաքանչյուր օր ավարտվում էր խառույկի շուրջ խմբակների պատրաստած աշխատանքները ներկայացնելով և խառույկի շուրջ երգելով, խառույկի ծրագրերից մեկը հատկացվել էր դիմակահանդեսի մրցույթին, որում բոլոր սկաուտները ունեցան իրենց մասնակցությունը և մրցույթի հաղթող ճանաչվեց Ավենիա Ղազարյանը:

Սկաուտները մարտի 31-ի առավոտյան գնացին ծովափ, սակայն խիստ քամու և ցրտի պատճառով նրանց զբոսանքը երկար չտևեց:

Բանակումի ընդհանուր պատասխանատուներն էին Անաիս Մահմուդյանը և Սիունե Ղարիբյանը, բանակումի

իրամանատար և բանակումի հանձնախմբի պատասխանատուներն էին Լիլիթ Սարդարյանը և Էջմին Կարդումյանը, հանձնախմբի անդամներն էին Վահե Ծատրյանը, Անարեթ Սաֆարյանը, Մելինա Մանգասարյանը, Սիրո Նազարյանը, Արին Կարապետյանը, Նարիկ Աբրահամյան, Արուֆին Խեչումյան, Անի Խեչումյան, Ադրիկ Քեչիշյան, Սեդրի Բուդաղյան և Ներիկ Նավասարթյանը:

Ապրիլի 1-ին սկաուտները բանակավայրի ընդհանուր մաքրությունից հետո քաղցր և ջերմ հուշերով վերադարձան Թեհրան: Հարկավոր է նշել, որ այս ողջ բանակումի ընթացքում սկաուտներին յուրաքանչյուր օգնում և նրանց կողքին էին Ռաշտ քաղաքի հոգեբարձության նախագահ պրն. Էդիկ Հովսեփյանը:

### Թղթակից՝ Լիլիթ Սարդարյան

### Ընտրվեց Իրանի Հայ Բժշկական Սիության նոր վարչությունը

Արդեն ավելի քան 30 տարի է, որ հիմնադրվել է Իրանի Հայ Բժշկական Սիությունը (ԻՀԲՍ), որը նախաձեռնեց և բարերար Ավետիսյանի ջանքերի շնորհիվ իր կողքին հիմնադրեց Ավետիսյան բուժարանը, որը գտնվում էր այդ միության հսկողության և խնամքի տակ, սակայն հետագայում բուժարանը՝ հանձնվեց Թեհրանի Հայոց Թեմին, որպես ազգային կալված և հիմնարկություն:

2009 թվականի մարտի 6-ին տեղի ունեցավ միության ընդհանուր ընտրական ժողովը, որտեղ նախկին վարչությունը ներկայացրեց իր տարած աշխատանքները, հաշվեքնիչ հանձնախմբի զեկույցը, իսկ վերջում ընտրվեց միության նոր վարչություն ըստ հետևյալի՝

1- Դկտ. Էդգար Շահգեղյան, 2- Դկտ. Լուսիկ Սիմոնյան, 3- Դկտ. Ռուբիկ Սարդարյան, 4- Դկտ. Վայիկ Ռաֆեսյան, 5- Դկտ. Հրաչ Խաչատրյան, 6- Դկտ. Ֆրանսուա Աբգարյան և 7- Դկտ. Վիկտորիա Սարյան: Որպես հաշվեքնիչ մարմին ընտվեցին դկտ. Հայկազ Սարգսյանը և դկտ. Տիգրան Շահբեգյանը:

Բարձր գնահատվեց ու գնահատանքի խոսք ասվեց միության քարտուղար օր. ժանեթ Աղաջանյանի տարած աշխատանքների կապակցությամբ:

### ԵՐԿՈՒ ԻՐԱՆԱՐԱՅԵՐԻ ՇԵՏԱՆՈՒ ՑՈՒՑԱՆԱՆԴԵՍ՝ ՖՐԱՆԿՖՈՒՐՏՈՒՍ

Ֆրանկֆուրտի «Համաշխարհային մշակույթի թանգարանում» անցյալ տարվա դեկտեմբերի 6-ին բացված երկու իրանահայերի հետմահու ցուցահանդեսը շարունակում է մնալ գերմանացի արվեստագետների ուշադրության կենտրոնում, գրում է «Արմինյն միոր սփեքթեթթ» շաբաթաթերթը հավելելով, որ ցուցահանդեսը կշարունակի բաց մնալ մինչեւ այս տարվա հուլիսի 12-ը:

«Արեւելքի պատկերներ լուսանկարներում եւ կտավներում՝ 1880-1980 թթ.» ընդհանուր խորագրի ներքո ցուցադրվել են լուսանկարիչ Անտուան Սիրուզին խանի (1840-1933 թթ.) եւ նրա որդու՝ Գևորգի Անդրե «Դերվեշ» Սեւրուզյանի (1894-1996 թթ.) 97 ստեղծագործությունները՝ մեծ մասը առաջին անգամ: Նրանք դիվանագետների ընտանիքին են պատկանել եւ

մեծապես ազդված են եղել պարսկական արվեստից, եւ չնայած գերմաներենով հրատարակված արվեստի գորքերում նշումներ եղել են նրանց մասին, այդուհանդերձ նրանք առավել հայտնի են եղել Մ. Նահանգներում եւ Մեծ Բրիտանիայում: Անդրեն ճանաչված է եղել հատկապես «Շահնամեի» իր նկարազարդումներով:

Ըստ լրատվության, ցուցանմուշները թանգարանին է տրամադրել Հայդելբերգում բնակվող Անդրեի որդին՝ Էմանուել Սելրուզյանը:

## Հայաստան

### Երեւանում մեկնարկեց «Հայաստան-Իրան. գրական կամուրջներ» գիտաժողովը

**ԵՐԵՎԱՆ 10 ՍՄՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Երեւանում այսօր մեկնարկեց «Հայաստան-Իրան. գրական կամուրջներ» գիտաժողովը՝ Հայաստանի եւ Իրանի գրողների, գրականության ու արվեստի այլ գործիչների մասնակցությամբ: Նման գիտաժողով անցկացվում է երրորդ անգամ. առաջին հիմնադիրը տեղի է ունեցել 2004թ-ին Երեւանում, երկրորդը՝ 2006-ին Սպահանում (Իրան): Միջոցառման կապակցությամբ այսօր Հայաստանի գրողների միությունում հրավիրված մամուլ ասուլիսում ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը ներկայացրեց գիտաժողովի ծրագիրը, նշելով, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ վերջին քսան տարում զարգացող քաղաքական ու տնտեսական հարաբերություններին զուգընթաց ամրապնդվում են մշակութային, այդ թվում՝ գրական կապերը:

### Նախաստորագրվեց Հայաստանի եւ Իրանի միջեւ ուղիղ երկաթուղային գիծ կառուցելու մասին փոխընթացման հուշագիրը

ԵՐԵՎԱՆ, 3 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ տրանսպորտի եւ կապի ու Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների եւ հաղորդակցության նախարարներն այսօր նախաստորագրեցին Հայաստանի եւ Իրանի միջեւ ուղիղ երկաթուղային գիծ կառուցելու մասին փոխընթացման հուշագիր, որն առաջիկայում կստորագրվի երկու երկրների նախագահների կողմից՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Իրան կատարելիք այցի ընթացքում:

Ինչպես նշեց ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը, հուշագրով երկու կողմերը հաստատեցին իրենց պատրաստակամությունը Հայաստան-Իրան երկաթգծի նախագծի իրականացման հարցում եւ արձանագրեցին, որ արագ տեմպերով պետք է իրականացնել երկաթգծի կառուցման հետ կապված բոլոր գործընթացները: Այդ նպատակով երկու երկրների նախարարությունների փոխնախարարների մասնակցությամբ որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ, որը կապահովի նախագծի իրականացման բոլոր նախապատրաստական աշխատանքները: Երկու երկրների նախարարները քննարկել են նաեւ մի շարք այլ հարցեր Հայաստան-Իրան տրանսպորտային հաղորդակցության, մասնավորապես մաքսային անցակետերում առկա գործընթացների վերաբերյալ խնդիրներ: «Մենք արձանագրեցինք, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ տրանսպորտային համագործակցությունն այսօր շատ կարեւոր է երկու երկրների համար, եւ

Հայաստանն Իրանի տարածքով հնարավորություն կունենա դուրս գալ Պարսից ծոցի բոլոր նավահանգիստներ, ինչը կապահովի նոր ուղիներ բեռնափոխադրում իրականացնող կազակերպությունների համար», -ասաց Գ. Սարգսյանը:

## Իրան

### ԻՐԱՆՈՒՄ ԲԱՅՎԵԼ Է ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԿԻՍԱՆՂԻՆ

ԱԳՆ-ից հաղորդում են, որ մարտի 1-ին Իրանի Փարդիս տեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցավ ականավոր գիտնական, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի կիսանդրու բացման արարողությունը: Իրանի արտաքին գործերի նախարարության եւ Թեհրանում ՀՀ դեսպանության համագործակցության շնորհիվ Հայաստանում քանդակված եւ Իրան բերված հայազգի անվանի աստղագետի պղնձածուխ կիսանդրին առաջինն էր, որն իր տեղը գտավ վերոնշյալ այգու գիտնականների պուրակում, ուր նախատեսված է անմահացնել համաշխարհային համբավ ունեցող նաեւ երեսուն այլ երկրների գիտական գործիչների հիշատակը:

## Հասարակական

### 14-րդ շրջանի ԹՀԹ-ի ՊԺ-ի երկրորդ նիստը Մաս 2

2009 թվականի փետրվարի 3-ին Ազգային Առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ նորընտիր 14-րդ Պատգամավորական ժողովի երկրորդ նիստը: Նիստի մասին որոշ տեղեկություններ էին փոխանցվել նախորդ համարում և ստորև ներկայացնում ենք շարունակությունը:

Ինչպես հաղորդել էինք, Թեմական խորհուրդը ներկայացրեց իր ամփոփ զեկույցը, որտեղ ավելի շուտ նպատակ էր հետապնդում նորընտիր Պատգամավորական ժողովին տեղյակ պահելու նախկին ՊԺ-ի որոշումներից և իրենց ձեռնարկած կամ ապագայում ձեռնարկվելիք ծրագրերի շուրջ:

Խոսելով կրթական համակարգից և հայոց դպրոցների մասին, ԹԽ-ն տեղեկացրեց, որ ներկայիս մեր դպրոցների աշակերտության թիվը Թեհրանում 3824 է և անցյալ տարվա համեմատությամբ նվազել է 553-ով: Նույն չափով պակասել է պարսկական դպրոցներ հաճախող հայ աշակերտների քանակը: Այս երևույթի պատճառը հիմնականում արտագաղթն է:

Թունյան դպրոցը վերակառուցման մեջ է, դպրոցը ունի 10 կալվածագրեր, որոնց հարցերը, բացի մեկից, լուծված է, իսկ այդ մեկ հարցի շուրջ որոշ դժվարություններ կային, սակայն այժմ 90 տոկոսով լուծված է: Դպրոցի շինարարության հարցը մրցույթի է դրված, որից հետո կսկսվի աշխատանքները: Այս դպրոցում սովորելու են Թունյան դպրոցի տարրական ու Սասուն մանկապարտեզի աշակերտները:

Կրթական խորհուրդը որոշ դպրոցների համատեղման հարց է առաջ քաշում, որովհետև պետական կրթության նախարարության կողմից սահմանված է, որ

յուրաքանչյուր դպրոցում աշակերտության թիվը 33 հոգուց պակաս չպետք է լինի, սակայն դա մեզ համար առաջին բացառապես կասեցված է: Նշվեց, որ 188 ուսուցիչ ազգային բյուրջեից է աշխատավարձ ստանում, որոնց աշխատավարձը միջին հաշվով 20 տոկոսով ավելացվել է: Սրանք որոշ դժվարություններ են առաջացնում բյուրջեի տեսակետից: Տարրական դպրոցները երկսեռ դարձնելու ուղղությամբ աշխատանքներ է տարվում:

Ինչպես տեղյակ եք, Պատգամավորական ժողովը որոշում էր ներկայացրել, որ «Արամ» սրահը վաճառվի քաղաքապետարանին, սակայն, քանի որ քաղաքապետարանը բյուրջե չունի, սպասվում է նրանց կողմից այդ հարցը լուծվի և երբ գումարը մուծեցին «Արամ» սրահը հանձնվի քաղաքապետարանին:

Սասուն կամ Նարմաք քաղաքամասում դկտ. Սուլթանի գետնի վրա էժան բնակարանների շինարարության նախագծերը պատրաստ են և «Բանկ Մասկան»-ի հետ էլ բանակցության մեջ ենք, որպեսզի կարողանանք յուրաքանչյուր հարկաբաժնի համար վարկ վերցնել: Ըստ Թեմական Խորհրդի հաշվարկներով այդ մեկ սենյականոց բնակարանների արժեքը կլինի 60-90 միլիոն թուման: Այդ բնակարանների տրամադրելու համար հատուկ պայմաններ ու սահմաններ կճշտվեն և տեղյակ կպահվեն մեր համայնքի անդամներին:

ՊԺ-ի նիստի ընթացքում բարձր գնահատվեց և շնորհավորանքներ ասվեց պատգամավոր Յերոս Ավանեսյանին երկրի համապատասխան մարմնների կողմից որպես լավագույն բասկետբոլի իրավարար ճանաչվելու կապակցությամբ:

Պատգամավորները հետաքրքրվեցին, թե արդյոք ներկա Պատգամավորական ժողովի որոշումները կարող են բեկանվել և պատասխանը այն եղավ, որ իրավունքը կա, սակայն կրկին պետք է դրվի քննարկման, իսկ դկտ. Ա. Հովհաննիսյանը հույս հայտնեց, որ նման բան տեղի չունենա: Նշվեց, որ նոր պայմանները կարող են ազդել նախկին որոշումների վրա:

Թեմական Խորհուրդը տեղեկացրեց, որ Հայաստանում զնված հողամասը 7 հեկտար է, գտնվում է Աբովյան քաղաքից հետո՝ Սևան տանող ճանապարհի վրա, և որի համար վճարվել է հինգ հարյուր միլիոն թումանի համապատասխան դոլար:

Այնուհետև ՊԺ-ի դիվանի առաջին քարտուղար պրն. Էմիլ Մնացականյանը ներկայացրեց դիվանի մոտեցումը ընդհանուր առմամբ՝ ըստ հետևյալի. «Պատգամավորական ժողովը պետք է իր ճիշտ տեղը գտնի համայնքում, պետք է ունենանք երկարատև ռազմավարություն, Թեմական Խորհուրդը զբաղվածության պատճառով հնարավորություն չի ունեցել լայն հետազոտություններ ու ուսումնասիրություններ կատարելու, սակայն Պատգամավորական ժողովը այս հնարավորությունը ունի և պետք է հանձնախմբեր կյանքի կոչելով այս աշխատանքները տանի, մենք, որպես պատգամավորներ, պետք է ձեռնահասություն ունենաք բոլոր տեղեկությունների, որ Թեմական Խորհուրդը ունի և պետք է տրամադրվի հանձնախմբերին իրենց աշխատանքների համար: Մեր ազգային կառույցների վերանայման անհրաժեշտություն կա և մեր կառույցների հստակեցման աշխատանք պետք է կատարվի և համապատասխանեցվի ներկա պայմանների հետ:

Բանավոր և գրավոր ներկայացվեցին մի շարք առաջարկներ մի խումբ պատգամավորների կողմից հետագա 4 ամյա աշխատանքների համար և որոշվեց որ

հետագա նիստերի ժամանակ նույնպես ներկայացվեն առաջարկներ:

Վերջում ԹՀԹ-ի առաջնորդ Տ.Ս. Արք. Սարգսյանը իր ողջույնի խոսքը և գոհունակությունը հայտնեց պատգամավորներին:

## Առաջարկներ ԹՀԹ-ի ՊԺ-ին

ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովի վերջին նիստի ժամանակ պատգամավորների կողմից ապագա ՊԺ-ի չորս տարիների աշխատանքների կապակցությամբ եղել են մի շարք առաջարկներ, որոնք հաջորդաբար կներկայացնենք Ձեր ուշադրությանը.

1- ԹՀԹ-ի պարսկերեն և հայերեն կանոնագրության թերությունները վերացնել, համապատասխանեցնել, վերանայել ու ժամանակակից դարձնել:

2- Թեմական Խորհրդի ընտրության ձևի հստակեցում ու թեկնածուների հատուկ չափանիշների ճշտում:

3- Ծանոթանալ և շարունակել դկտ. Հարմիկ Դավթյանի և մի շարք ուսումնասիրողների կողմից ծրագրված մեր համայնքի կյանքին վերաբերող տարբեր հարցերի ուսումնասիրությունը:

4- Իրանահայ մամուլի ներկայության թուլատվություն ՊԺ-ի դռնբաց նիստերում:

5- ՊԺ-ի պաշտոնաթերթի հրատարակում:

6- Կրոնական Խորհուրդը զբաղվի համալսարանի մուտքի կրոնի քննության հարցերի մշակմամբ և պարսկերեն լեզվով գրքի պատրաստմամբ:

7- Օժանդակություն ցուցաբերել Կրթական Խորհրդին՝ ուսումնասիրված և մշակված ծրագրեր ունենալու համար:

8- Արդիական տեխնոլոգիան ծանոթացվի մեր արհեստավորներին:

9- Մշակութային դպրոց-հաստատություն ունենալու կապակցությամբ որոշում ներկայացնել:

10- Պատգամավորների ու ժողովրդի միջև հանդիպումների կազմակերպման մեխանիզմներ ճշտել:

11- Մարզական և մշակութային աշխատանքների համար կյանքի կոչել համապատասխան մարմին, որը կմշակի և կիրականացնի որոշ համընդհանուր ծրագրեր:

12- Հոգևորական ճեմարան կամ համալսարան հիմնադրելու հարցը քննարկման ենթարկել և ձգտել համայնքում նման մի կենտրոնի ստեղծմանը:

13- Պ ահանջել ապագա Թեմական Խորհրդից, որ, ըստ պայմանների, կարճատև՝ 2 տարվա, և երկարատև՝ 10 տարվա, ծրագիր ներկայացնի, որին կարող են օժանդակել Պատգամավորական ժողովի կողմից կյանքի կոչված համապատասխան ուսումնասիրող հանձնախմբերը:

14- Թեմական և Կրթական Խորհուրդներին օժանդակություն ցուցաբերելու նպատակով Պատգամավորական ժողովում կյանքի կոչվեն հանձնախմբեր, որտեղ կարող են անդամակցել նաև ուրիշ ազգային մարմինների անդամներ ու մասնագետներ: Այս հանձնախմբերը գործադիր բնույթ չեն ունենալու և ավելի շուտ ուսումնասիրող և խորհրդատվական են լինելու:

15- Թեհրանում Հայաստանի Համահայկական Հիմնադրամի վարչություն հիմնադրելու ցանկությամբ Պատգամավորական ժողովում կյանքի կոչվի մի հանձնախումբ՝ այդ հարցը ուսումնասիրելու և հարմար առաջարկներ ներկայացնելու համար:

16- Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության հետ սերտ կապեր հաստատելու և գործնական համագործակցության ծրագրեր մշակելու նպատակով Պատգամավորական ժողովի անդամներից մի հանձնախումբ կյանքի կոչվի՝ նախարարությունը մեր համայնքին լավ ծանոթացնելու և գործադիր մարմիններին խորհրդատվական առաջարկներ ներկայացնելու համար:

17- Մեղրիի շրջանում Ձեյթունի ծառերի տնկման ծրագիր իրականացնել Իրանի և Հայաստանի պետությունների օժանդակությամբ, իրանահայ համայնքի նյութական աջակցությամբ՝ «Յուրաքանչյուր իրանահայ կարող է մեկ կամ մեկից ավելի զեյթունի ծառեր նվիրի Հայաստանին» կարգախոսով: Այդ կապակցությամբ, անհրաժեշտության դեպքում ավելի մանրամասն տեղեկություններ կփոխանցվի:

*Հարգանքներով՝  
ԹՀԹ-ի ՊԺ-ի պատգամավոր  
դկտ. Ռուբիկ Սարգսյան*

## Մեծապարտեզի անհրաժեշտությունը մեր համայնքում

Մեծապարտեզի մասին լսել ենք, բայց մոտկից չենք ծանոթացել, միայն վերջին տարիներին Իրանի քաղաքապետարանի կողմից ձեռնարկվեց և հիմնադրվեց աշխարհատեսների կենտրոններ, որտեղ աշխուժացան նաև հայկական երկու մասնաճյուղեր Թեհրանի Նարմաք (Սասուն) և Մաջիդիե (Ձեյթուն) քաղաքամասերում: Այդ երկու կենտրոններում տարիքավորները հավաքվում են ու տարբեր ծրագրեր են անցկացնում: Այս կենտրոնները չեն ձևավորվում հոսանքավորվում են Թեհրանի քաղաքապետարանի կողմից, սակայն մեր ազգային իշխանությունը նրանց նկատմամբ խորթ վերաբերմունք է ցուցաբերում, որովհետև ենթադրում է՝ քանի որ նրանք ենթակա չեն ազգային իշխանությանը, ուրեմն նրանք որևէ պարտականություն նրանց հանդեպ չունեն և երբեք որևէ օժանդակություն չեն ցուցաբերել և շարունակվում է այդ խորթ և անտարբեր վերաբերմունքը, որը կարծում են սխալ և ոչ ազգանպաստ քաղաքականություն է և արդյունքում տարիքավորների մի հատվածի մոտ դրական մոտիվներ չեն առաջանում մեր ազգային իշխանության նկատմամբ և պետք է մեր ազգային գործիչներն ու առաջին հերթին Թեմական Խորհուրդը վերանայեն իրենց մոտեցումը: Այս հարցը կարող է նաև Պատգամավորական ժողովի թեմա դառնալ:

Ինչքանով, որ մեզ հայտնի է ԱՄՆ-ում և Եվրոպական մի շարք երկրներում մանկապարտեզի նման գոյություն ունի նաև երկսեռ մեծապարտեզ, ուր տարիքավորները առավոտյան հանրակառքերով տարվում են և հատուկ

հոգեբանների ու աշխատողների միջոցով ծրագրեր են նախատեսված նրանց համար, զբաղվում են նրանք ու լավ ժամանց են ունենում: Միևնույն ժամանակ այդտեղ հետևում են նաև նրանց առողջությանը և հարկ եղած պարագայում օգնություններ է ցուցաբերվում: Տարիքավորները ամենաշատ օգնության կարիք ունեցող խավերն են բոլոր հասարակական միավորներում: Մեր իրանահայ համայնքում դա լավ շոշափելի է, որովհետև պայմանների բերումով երբեմն նրանք իրենց անօգնական են զգում և տարբեր դժվարությունների հետևանքով ստիպված են լինում մի կերպ հարմարվել ոչ դյուրին պայմանների հետ, որի հետևանքով առաջանում են տարիքային դեպրեսիվ հիվանդություններ:

Կարծում են արտագաղթի այս պայմաններում մեր համայնքը պետք է հատուկ ուշադրություն դարձնի տարիքավորներին և գործնական առաջարկներ ներկայացնի ու գործադրի: Սա կարող է ինչ որ տեղ նվազեցնի նաև արտագաղթի ընթացքը: Մենք համայնքի նոսրացման հետևանքով ունենք տարածքներ ու շենքեր, որոնցից մեկ - երկուսը կարող ենք հատկացնել այս գործի համար և չնչին փոփոխություններ տալով ստեղծենք մեծապարտեզ և վստահ են, որոշ բարերարներ նաև իրենց օժանդակությունը կցուցաբերեն: Այս հարցը կարելի է Պատգամավորական ժողովում և տարբեր շրջանակներում ու մամուլում քնարկման խնդիր դարձնել և եզրակացություններ անել:

## Համայակ Մինասյանի հիշատակին



Արդեն շուրջ 40 օր անցավ պրն. Համայակ Մինասյանի մահվանից: Անհրաժեշտ է մեր համայնքի անդամները ինչ որ չափով ծանոթ լինեն նման մի անձնավորությունների մասին և իր հիշատակն էլ վառ մնա մեր իրանահայ կյանքում:

Համայակ Մինասյանը ծնվել է 1931 թվականին Արաք քաղաքի Գուլիգարո գյուղում, երիտասարդ տարիքից աշխատել է «Մահաք» ընկերությունում և հանգստի է կոչվել 1991 թվականին: Նա ամուսնացել է 1956 թվականին և ունի 5 տղա, որոնք գտնվում են ԱՄՆ-ում: Նա միշտ դեմ է եղել արտագաղթին և այդ իսկ պատճառով երբեք չի ցանկացել ապրել ԱՄՆ-ում և այն համոզված էր, որ պետք է ապրել ծննդավայրում և մոտ լինել հայրենիքին:

Նրան շատ հոգեհարազատ էր իր ծննդավայրը՝ Գուլիգարո գյուղը և իր կյանքի ընթացքում, հատկապես թոշակի անցնելուց հետո, հաճախ էր այցելում Գուլիգարո և մոտ հարաբերությունների մեջ էր պարսիկ համագյուղացիների հետ: Նրան անհանգստացնում էր միայն գյուղի հայկական գերեզմանատան անմխիթար վիճակը և վերջապես իր մտքին դնում է, որ իր պապերի հիշատակի համար էլ է, մի քայլ վերցնի այդ ուղղությամբ: Նա իր շուրջ է հավաքում Թեհրանում բնակվող մի խումբ գուլիգարոցիների և առաջարկում է արհմիություն

հիմնադրել, որի առաջին գործը պետք է լինի այդ գերեզմանատան նկատմամբ հոգատարությունը:

Վերջապես նա հասնում է իր նպատակին քանի ընդհանուր հանդիպումներից հետո կյանքի է կոչվում «Գուլիգարդ» արհմիությունը և նրան հաջողվում է գուլիգարդցիների նյութական աջակցությամբ ու պետության նյութական ու բարոյական օժանդակությամբ ցանկապատել գերեզմանատունը և գերեզմանատան համար վկայագիր ստանալ պետական համապատասխան մարմիններից, որը սկզբնական շրջանում հենց Համայնակի անունով է լինում, իսկ հետագայում այն փոխանցվում է Թեհրանի Հայոց Թեմին:

Այսպիսով՝ Համայնակ Մինասյանը համարվում է «Գուլիգարդ» արհմիության հիմնադիրներից մեկը: Ցավոք սրտի նա տառապում էր շաքարախտի հիվանդությամբ, բայց կարողանում էր այդ հիվանդության դեմ պայքարել, սակայն սրտի ինֆարկտի հետևանքով մի քանի օր հիվանդանոցում, ապա իր բնակարանում բուժվելուց հետո մահանում է 2009 թվականի մարտի 4-ին:

Բոլոր գուլիգարդցիները և իրանահայ համայնքը վառ կպահի և կարժեքվորի նրա արած գործը և համայնքի պատմության էջերում այն կը գրանցվի:

*Ղևո. Ռուբիկ Սարգսյան*

## Խոհեր

### Մեր անցած ճամբան

#### գ- Մասջեդ Սուլեյման – Մաս գ

*Թ. Ղարախանյան Միրակցի*

Այնքան հիշատակելի է այն պահը երբ կառավարական «ՍԱԲՁԱԲԱԴ» դպրոցի ֆուտբոլի խաղին մի խաղադաջողի հարվածից աջ ոտքս ծունկից ցած կտորվեց և որեւէ միջոց չկար տուն հասնելու: Անդրանիկ անունով մի հայ երիտասարդ 9-երորդ դասարանից ոտքս փաթաթեց և իր հեծանիվի առաջը նստեցրեց և մեր տունը հասցրեց: Տեղիս հիվանդանոցին և բժիշկներին չվստահելով, վերջապես, սընըխչի Մահմուդ-ը ոտքս կապեց և առողջացա:

Ոտքս լավանալուց հետոյ ծնողներս իմ համար մի հեծանիվ առան, և ես հենց այդ ազնվական Անդրանիկի հետ հեծանիվի ընկեր դարձա և մեր գյուղի կյանքից պատմեցի, սարերից ու դաշտերից, աղբյուրներից ու լանջերից, լուսաբացի սարերի կաքավների կչչոցը, ամառվա արծակուրդ եկող նաֆտային ենկերության գրագիր ու բանվոր ընտանիքները որ կրկին այցելում էին իրենց հայրենի գյուղը և լուսնյակ գիշերների զվարճալի ընկերական գրույցները և երգերը և ... Անդրանիկը՝ շատ սիրեց և այդ ամառ ինձ հետ գյուղ եկավ, մնաց իմ պապոնց: Գյուղում ձիավարություն արեցինք, ձին ցորենի արտերի մեջ խոտնեց և միասին գետին ընկանք բայց չը վնասվեցինք: Այդ տարիների անձանօթ Անդրանիկ Ղարախանյանը և ես հարազատ ՀՕՐԵՂԲՈՐ ԹՈՒՆԵՐ էինք «Կարապետ և Թաղեվոս Ղարախանյաններ»:

Մյուս տարի ամռան, Արևդրանիկը դպրոցը վերջացնելուց հետո իր հորեղբոր հրավերով Թեհրան գնաց, որ մի արհեստի համար գնար Անգլիա և լսեցի որ գնաց, սովորեց, վերադարձավ եւ ամուսնացավ ու լավ վիճակ ունեցավ, բայց մեր կապը լրիվ կտրվեց. ես ամառը գյուղ վերդառձա և հասկացա, որ գյուղում քանի

տուն ավել հայ չի մնացել, եկեղեցին անտեր էր մնացել. զանգերը, ավետարանը և մնացած եկեղեցու իրերը փոխադրվեցին Նոր Ջուղայի Վանքը եւ եկեղեցին քանդվելուց հետոյ իր 4 սիւները որ էջմածնից էր բերված եկեղեցու կառուցելու Քալանթար Մեհրաբ «ԵԱՎԱՐ» Ղարախանյանի կողմից, բնականաբար ժառանգում էր մեծ պապս Քալանթար Թաթեվոս Ղարախանյանը և իր Թաղման վայրը Նոր Ջուղայի գերեզմանոցում, տեղ գտավ այդ Սիրաք գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցու 4 Քարից տաշված ամուր սյուները: Ընդհակառակ օտար գյուղերի որ «Սեփահ-է-Դանեշի»-ի ծառայության ժամանակ անձամբ տեսա օտար գյուղերի հայկական եկեղեցիները հանձնել էին պարսիկ ժողովրդին, ինչպես էին Մամուռանի, Աղբուլաղի, Սինագանի եւ Քօնարք գյուղը, «Նաջառ Մինասենց գյուղ» գյուղերում:

Ապա կտրված ոտքիս ցավը թեթեւացնելու համար Ռադիո առանք և որովհետեւ ռադիոն հազվագյուտ էր, մեր տան փոքրության բերումով ընկերներով որոշեցինք օրվա հատուկ ժամերին մեր տան հետևը հավաքվեինք ու ռադիո լսեինք: Հայերեն ծրագրեր չկար մինչև «Երևանն է խօսում» գիշերվա 11-ին և այդ մեր օրվա ամենից ցանկալի պահն էր, հատկապես մեծերի համար Սիամանթոն եւ Խաջե Ջարեն; «Երեվանն է խօսում» մեր ամենաքաղցր և հուսալի ձայնն էր որ մեր հոգին շաղկապում էր Հայրենիքի հետ:

Մեր փոքր տղաների համար խաղերն էին Չուք Քիլի (Base Ball)-ի նման, Գուլուլե, Սար-Բորթի, և աղջիկների համար՝ Պլան-Պլուտիկ, Քարոջ և այլն:

Նաֆտ. Ընկերության կանոնների համաձայն մեր շրջանում Սինեմա չկար, միայն հինգշաբթի գիշեր Փոշտե Քուհից շատ հեռու մի օտար բանվորների գաղութի նստավայրը՝ ՆԱՖՏՈՒՆ՝ անունով որտեղ հայ եւ պարսիկ բանվորները ընկերության սարքած տներում էին ապրում այդ գաղութի համար ընկերությունը սինեմա էր կառուցել որի մեջ 300-400 հոգի կը տեղավորվեր: Սինեմաի տոմսը 5 կամ 10 ռիալ էր, ամեն մարդ կարող էր գնալ առանց խտրականության , այդ ժամանակվա ֆիլմերի շատ մասը սև – սպիտակ էին եւ սիրված ֆիլմերից կամ Քա-բոյի ֆիլմերը Գարի Քուլիերից էին եւ դեռ Ջան Վեյնից ֆիլմ չկար, կամ հնդկական թարգմանված պարսկերենի, օրիգինալ պարսկական ֆիլմ չկար, մինչև 50-ական թվականների վերջերը որ բազարում 2 մասնավոր սինեմա պատրասցվեց Դիանա և Սետարե Աբի որ բանվորը սկսեց ազատություն վայելել: Մինչև այդ, Սինեմա գնալու համար, Փոշտե Քուհից քայլում էինք 3-4 Կիլոմետր մինչև Նաֆտուն եւ սինեման վերջնալուց հետո էինք քայլում տուն որովհետեւ հատ ու կենդ թաքսի կար, բայց խուճը որ միասին սինեմա էին եկել նույն խումբը վերադառնում էին տուն:

Գյուղի ավանդական սովորության պես , մարդիկ գրույցի էին գնում իրար տուն, հատկապես տոները շնորհավորելու: Իհարկե գբաղմունքների պակասությունից էլ իրար տուն հավաքվում կամ կարդ էին խաղում կամ լոտո: Այս խափի մեջ մի հսկա ցանկություն կար պատմիչի բերանից պատմություններ լսել: Եւ Փոշտե Քուհի պատմիչի շուրջը այնքան որ հիշվում է հինքշաբթի գիշերները մեծ թվով փոքր ու մեծ հավաքվում էին արեւելյան սրճարանների «Ղահվախանեի» նման ու լսում այդ հրաշալի պատմիչին՝ տարիների սիրելի և հարգելի պարոն ԿԱՐԱՊԵՏ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ-ին որի ծածկանունն էր Մեյեդ Քրամվիլ:



Մշակույթ

# Հայերը Իրանական Բանակում

(Պատմական համառոտ ակնարկ)

Դր. Էդ. Բաղդասարյան  
www.Edic-Baghdasarian.com  
edbagh@gmail.com

*Հայերը Իրանում եղել են դեռևս մ.թ.ա. 6-րդ դարից: Դրանք հիմնականում հայկական զորամասեր էին, որոնք վասալական պարտավորություն էին կատարում՝ ծառայելով Աքեմենյան պետականությանը: Ստորև համարոտ ներկայանում ենք հայոց դերը իրանական բանակում:*

**1-** Առաջին հայ զինվորականը Իրանի զորքերում հիշատակվում է Իրանի Քերմանշահ քաղաքի մոտակայքում պահպանված Բիստունյան արձանագրություններում, որտեղ Գարեհ տագավորը թվարկելով իր տարած հաղթանակները անդրադառնում իր վարած պատերազմները հայ ապստամբները դեմ: Նա հինգ ճակատամարտ է մղում երկուսը պարսիկ զորավար Վահումիսայի, իսկ երեքը հայ զորավար Գադարշիշի հրամանատարությամբ 521թ.<sup>1</sup>: Հետագայում հայերը իրենց դերն են ունենում պարսկական բանակում՝ օրինակ , մթ.ա. 480թ. Հունաստան արշաված Քսերքսես արքայի բանակում կար նաև հայկական զորամաս<sup>2</sup>:

**2-** Շահ Աբբաս մեծի օրոք հայերը չափազանց նշանակալից դեր են ունեցել երկրի քաղաքական եւ զինվորական կյանքում, նրանցից կարելի է հիշել մի կանխիկ: Շահը նավանափոխ քրիստոնյաներից ստեղծում է 15,000 հոգանոց հեծելազոր, որի կարեւորագույն մասն էին կազմում հայերը: Այսպես, նրանք ստրուկներ եւ ծառաներ էին եւ «Դուր» էին կոչվում, նրանց հրամանատարը «Դուլար-Աղասի» էր անվանվում: Շահ Աբբասի ամենամանջանավոր սպարապետ եւ Դուլար-Աղասին էր հայազգի Ալլահվերդի-խանը, որ Շահի կողմից շատ սիրված եւ հարգելի անձնավորություն էր: Նա նշանակվեց Ֆարս նահանգի իշխանաց իշխան («Ամիր-օլ-Օմարա») եւ ընդհանուր զորքի սպարապետ (1595 թ.) ապա Քոհգիլույե նահանգն էլ անցավ նրա իշխանության տակ: Այնուհետեւ մինչեւ 1601թ. Լարի մարզի եւ Օմանի ծովափնյա շրջանների ու Բահրեյն կղզու իշխանությունն ստացավ:<sup>3</sup>

**3-** Ալլահվերդի խանի մահից հետո, Շահը Ֆարս նահանգի իշխանաց իշխանությունը հանձնեց նրա անդրանիկ որդուն՝ Էմամ-Դուլի խանին, որը Լարեստանի կառավարիչն էր, իսկ մյուս որդուն՝ Դավուդ խանին

նշանակեց Գարաբաղի իշխանաց իշխան<sup>4</sup>: Իրանի բանակը Էմամ-Դուլի խանի հրամանատարությամբ պորտուգալցիներին պարտության մատնելով Գանբրուն քաղաքը իր շրջակայքով ու անառիկ բերդերն ու կղզիները ազատագրեց, այնուհետեւ հիշված քաղաքը Բանդար-Աբբաս (Աբբասի նավահանգիստ) վերանվանվեց:

**4-** Մյուս հայազգի գործիչներից էր երեւանցի Գարչայ խան Դուլար-Աղասին: Նրան իր ցուցաբերած քաջագործությունների եւ հավատարմության պատճառով, նշանակեցին երկրի սպարապետ, Ատրպատականի եւ Խորասանի իշխան եւ իր մահից հետո Խորասանի նահանգապետությունը հանձնեցին նրա որդուն՝ Մանուչեիր խանին:<sup>5</sup> Հատկանշելի է որ տագավորը նահանգների կառավարումը մեծ մասամբ զինվորականներին էր վստահում:

**5-** Յուսեֆ խանը վերոհիշյալ Գարչայ խանի մտերիմ ընկերներից, Շիրվանի իշխանաց իշխանն էր: Շահ Աբբասը հաճախ սիրալիբ կերպով երկուսին միասին իր մոտ էր կանչում:<sup>6</sup>

**6-** Նադիր Շահ Աֆշարը (1688-1747թթ.) մի խումբ հայերի, հակառակ իրենց կամքի, գաղթեցրեց Խորասան նահանգը, որպեսզի աջակցեն այդ շրջանի առեւտրի զարգացմանը: Նա մի խումբ հայեր ներգրավեց իր բանակում:<sup>7</sup> Թուրքերի դեմ Նադիր Շահի պայքարում նրան դաշնակցել են Արցախի, Սյունիքի, Այրարատի հայերը:<sup>8</sup>

**7-** Հայասեր Քարիմ խան Չանդից (1699-1779) հետո Աղա Մահմեդ խան Գաջարն (1742-97թթ.) է գահակալում, սա էս իր բանակում ուներ մեծ թվով հայեր, որոնք գլխավորապես ծառայում էին որպես թնդանտաճիզներ:<sup>9</sup>

Գաջարների հարստության տիրապետության նախնական ժամանակաշրջանում, նրանց ծառայել են բազմաթիվ հայեր, որոնց ներկայացնում են ստորև:

**8-** Գեներալ Դավիթ խան Սագինյանը Ֆաթալիշահ թագավորի ժամանակ Իրանի զորաբաժանումների հրամանատարն էր Ֆարս եւ Սպահան նահանգներում:<sup>10</sup>

**9-** Խոդադադ-խան Էրմենին (1781-1847), 1831-ից ստացել է խանության տիտղոս, դարձել Խոյի, Արդաբիլի, Ուրմիայի, Քերմանշահ եւ Իրաքի հրամանատար, 1844 թ. Թավրիզի կուսակալ:<sup>11</sup>

**10-** Յուսուֆ խան (Ճատուր կամ Մինաս Մայինյանց): Ծնվել է 1781-82-ին Թիֆլիսում: 1792 թ. գերեվարվել է պարսիկների կողմից, եղել է պետական գործիչ, սպարապետ եւ Ֆաթալիշահի խորհրդականը: Նա գաղտնի պահել է քրիստոնեությունը: Մահացել է 1824-ին: Մահից հետո

<sup>1</sup> - Ս. Գ. Պետրոսյան, Գադարշիշի զորաբանակի նահանջի երթուղին, ՊԲՀ, Երեւան, 1982, Թիվ 3, էջ 151: Նաեւ՝ Հայ ժող. Պատմություն, Երեւան 1985, էջ 35:  
<sup>2</sup> Նույն տեղում:  
<sup>3</sup> Նասրուլլա-Ֆախաֆի, Շահ Աբբասի կյանքն ու զործունեությունը (պարսկերեն), Թեհրան 1369 (1990 թ.), էջ 430:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 230:  
<sup>5</sup> Նույն տեղում, էջ 231:  
<sup>6</sup> Նույն տեղում, էջ 432:  
<sup>7</sup> Էսմաիլ Ռահին, «Իրանի Հայերը», Թեհրան 1977, էջ 36-37:  
<sup>8</sup> Հայ ժողովրդի Պարմություն, 3. 4, Երեւան, 1972, էջ 178-192:  
<sup>9</sup> Էսմաիլ Ռահին, «Իրանի Հայերը», Թեհրան 1977, էջ 38:  
<sup>10</sup> Նույն տեղում, էջ 47:  
<sup>11</sup> Արծվի Բախչինյան, «Ծագումով հայ են», Երեւան, 1993 էջ 148:

սպարապետության պաշտոնն անցել է որդուն՝ Կուլամ-Հուսեյնին:<sup>12</sup>

**11-** Կուլամ Հուսեյն խանը Ֆաթալիշահի եւ հայուհի Խորիշանի (Շահի 57-րդ կնոջ) դստեր՝ Մահ-Բեգումի ամուսինը, եղել է Իրաքի մարզպանի տեղապահ, 1824-ից սպարապետ:<sup>13</sup>

**12-** Մուսիս խան (18-րդ դ. երկրորդ կես-1820 կամ 1821), ռազմական գործիչ, թնդանոթածիզների գլխավոր հրամանատար, ծառայել է Աղա Մահմեդ խանի եւ Ֆաթալիշահի ժամանակ, մասակցել է բազմաթիվ ճակատամարտերի, թաղված է Ղազվինի հայոց եկեղեցու բակում:<sup>14</sup>

**13-** Յուսուֆ խան Ամիր Թոփխանե Գոլոյենց («Ամիր Թոփխանե» նշանակում է թնդանոթածիզների գլխավոր հրամանատար, ծն. 1783-85) ռազմական գործիչ, 19-րդ դարի Իրանի պատմության ակնավոր դեմքերից էր:<sup>15</sup>

**14-** Յուսուֆ խան, թնդանոթածիզ, ծնվել է Թիֆլիսում, արցախցիների ընտանիքում: 1795թ. Աղա Մահմեդ խանը նրան բերել է Իրան եւ Թեհրանում նրան հանձնել թնդանոթածուլման գործը: Մահացել է Թեհրանում:<sup>16</sup>

**15-** Մանուշար խան Էնկոլոյայան-Մամիկոնյան (Շամս-օլ-դոլե). Ղազար հարստության հիմնադիր Աղա Մահմեդ խանը 1795-1795 թթ. իր կովկասյան արշավանքից հետո մեծ թվով հայեր է գաղթեցնում Իրան, Էնկոլոյայան ազնվատոհմ ընտանիքը նույնպես նրանց մեջ էր: Նրանք իրենց հինգերորդ պապի անունով՝ Ջոհրաբյան էին կոչվում: Իսկ Էնկոլոյայ վրացերեն նշանակում է «գիտության շտեմարան», (Ջոհրաբի գիտական համբավի պատճառով):

Մանուշեիր (կամ Մանուշար) խանը 8-10 տարեկանում է Պարսկաստան բերվում (1795թ.), նրա մասին կենսագրական տվյալները լրիվ չեն, սակայն նրա գլխավոր գործունեությունը սկսում է 1837թ.: Այդ թվականին Բասրան ապստամբել էր Իրանի դեմ: Մանուշար խանը 40,000 զինվորների գլուխն անցած, հաջողությամբ զապում է ապստամբությունը: 1840-47 թթ. լինում է Սպահանի նահանգապետ, Հյազգի Խոսրով Տեր-Մամվեյանից հետո (Ֆաթալիշահի, Մահմեդ Շահի եւ Նասրեդդին Շահի ժամանակաշրջանում): Նա կատարել է շինարարական բարեփոխական լայն գործողություն: Վախճանվել է 1847 թ. փետրվարի 9-ին, թաղված է Ղոմ քաղաքում: Նրա գերեզմանը զարդարել է իշխան Գավիթ Սելիքովը, Մանուշար խանի քրոջ որդին:<sup>17</sup>

**16-** Սողոմոն խան Էնկոլոյայան (Սահամոլթովե). Նա Թիֆլիսից կամովին եկել էր Պարսկաստան եւ գործակցել իր հորեղբոր՝ Մանուշար խանի հետ: Եղել է նահանգապետ եւ սպարապետը՝ Ֆարսի, Սպահանի եւ Խուզստանի:<sup>18</sup> Նա

Իրանի պետական-զինվորական կյանքի մեջ ծանոթ էր Սողեյման խան անունով, նա մասնակցել է բազմաթիվ կռիվների, Խուզեստանում, լոռեստանում Մանուշարխանի հետ: Նա մահացել է 1853թ. Թեհրանում:

**17-** Աղալար Բեկ Էնկոլոյայան, ընտանիքի մյուս անդամների նման անցնում է Իրան, 1808 թվականին Թեհրանից մեկնում է Թավրիզ թագաժառանգ Աբբաս-Միրզայի հատուկ բանակին միանալու համար: Աբբաս միրզան նրան «Խան» տիտղոս է շնորհում: Թագաժառանգը 1820թ. Աղալար բեկ խանին պարտավորություն է հանձնում հայ երիտասարդներից հեծելագոր կազմակերպելու կապակցությամբ, ապա նա նշանակվում է Աբբաս միրզայի տիկնապահ զորքի հրամանատար, նա նաեւ մասնակցել է զանազան միջազգային բանակցությունների: Նա իր մահկանացուն կնքեց 1845 թվականին:<sup>19</sup>

**18-** Նարինան խան Էնկոլոյայան (Ղավամուսաթանե՝ պետության նեցուկ), ծնվել է 1836թ. Թեհրանում, սովորել է Փարիզում, ապա միացել բանակին եւ նշանակվել գեներալ ադյուտանտ, սակայն տիրապետելով Ֆրանսերենին անցել է Իրանի արտգործնախարարություն, եւ ստանձնել զանազան պաշտոններ, մահացել է Բեկիայում չքավորության մեջ:<sup>20</sup>

**19-** Ջահանգիր խան Էնկոլոյայան-Մամիկոնյան. (Սահամոլթովե) Սողոմոնի որդին, ծնվել է 1833թ. Թավրիզում: Ակնառու մեքենագետ ու ճարտարագետ էր: Ուսանել է Եվրոպայում, ապա անցնում զինվորական ծառայության, ստանում է գեներալի աստիճան, ապա դառնում Նասրեդդին Շահի գեներալ-ադյուտանտը:<sup>21</sup> 1862 թվականին, նա նշանակվում է զինագործարանի պետ եւ որպես ճարտարագետ 1882թ. կարողանում է փամփուշտներ չիկնել Իրանի բանակի համար:<sup>22</sup> Նրա սույն գործը արժանացավ Շահի ուշադրությանը եւ վերջինս նրան նշանակվեց արդյունաբերության նախարար: Նա լուրջ աշխատանք է տարել վառօդաչիկության, չթագործության, թղթաշինության բնագավառներում: Նա ուներ ծրագրեր նոր գործարաններ հիմնելու համար, որոնք չիրականացան նրա մահվան պատճառով 1892թ.:<sup>23</sup> Ջահանգիր խանը Իրանի առաջին արդյունաբերության նախարարն էր: Նրա դին ամփոփեցին Թեհրանի Ս. Գեուրգ եկեղեցում:

**20-** Հովհաննես խան Ազալայան (Մանի-օլսաթանե), ծնվել է 1833թ.: Իր ծառայությունը սկսել է որպես արտգործնախարարության թարգմանիչ, ապա հյուպատոս եւ դեսպան: 1896թ. նրան շնորհվել է գեներալի աստիճան, իր նվիրական ծառայությունների համար ստացել է 15 բարձրակարգ շքանշաններ զանազան երկրների ղեկավարներից:<sup>24</sup>

Շար. 1

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 210:  
<sup>13</sup> Նույն տեղում, էջ 161:  
<sup>14</sup> Նույն տեղում, էջ 205:  
<sup>15</sup> Նույն տեղում, էջ 211:  
<sup>16</sup> Նույն տեղում, էջ 211:  
<sup>17</sup> Արմենակ Մաքսապետյան, Էնկոլոյայան ընտանիքը, Ժողովածու Ալիք օրաթերթի հնգամյակի առիթով, Թեհրան, 1937, էջ 128:  
<sup>18</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>19</sup> Անդրանիկ Յուլույան, Իրանի հայերը, Թեհրան, 2001թ, էջ 378-79:  
<sup>20</sup> Անդրանիկ Յուլույան, Նարինան խան..., Ալիք, Թեհրան 1994, մայիսի 19:  
<sup>21</sup> Էթեշամուլսաթանեի հուշերը (Պարսկերեն), Թեհրան, 1366 (1987), էջ 142:  
<sup>22</sup> Մեհդի Բամդադ, Իրանի քաղաքական այրերի կենսագրությունը, (Պարսկերեն), Թեհրան, 1357 (1978), էջ 285:  
<sup>23</sup> Նույն տեղում, էջ 765:  
<sup>24</sup> Անդրանիկ Յուլույան, Իրանի հայերը, Թեհրան, 2001թ, էջ 395-97:

**Յունեսկոյի որոշմամբ 2008 թ. հայտարարվել է Սարոյանական տարի Զեռնարկ «ԲՖՖԻ» համալիրում**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**



2009 թվականի փետրվարի 27 ին ՅՄՍ ԲՖՖԻ համալիրում նշվեց 20-րդ դարի ամենանշանավոր գրողներից Վիլիամ Սարոյանի ծննդյան 100 ամյակը:

Ծրագիրը սկսվեց Իրանահայ գրող՝ Խաչիկ Խաչերի բացման խոսքով: Նա իր խոսքերում հայտարարեց որ 2008 թվականը Յունեսկոյի կողմից հայտարարվել է Սարոյանական տարի:

Ծրագրի հաղորդավարն էր Խաչիկ Խաչերը և իր խոսքերի մեջ նա նաև պատմում էր Սարոյանի անձնական կյանքից:

Ծրագրի ընթացքում ելույթ ունեցավ միության «Մեղեդի» երգչախումբը՝ ղեկավարությամբ տկն. Զարուհի Ենգոյեանի: Ասմունքեցի Անի Նազարյանը («Աղավնու կտցից ընկած ճամփաներ» իս.Վ.Յակոբյան) և Արթին Բաղունյանը («Վիլիամ Սարոյեան» իս. Սիլվա Կապուտիկյան):

Բանախոսությամբ հանդես եկավ Հայաստանի գրողների միության նախագահ՝ պրոֆ. Լևոն Անանյանը «Վ. Սարոյեանը և Հայաստան-Իրան բարեկամությունը» բանախոսությամբ, որում տեղ էին գտել Վ. Սարոյեանի հետևյալ խոսքերը. «Հայ գրող Վիլիամ Սարոյեանն էմ: Ինքս էլ ցեղասպանության զոհ եմ, ծնվել եմ օտար երկրում»:

Ղարաբաղի գրողների միության նախագահ պրոֆ. Վարդան Յակոբյանի պատգամը օրվա առիթով ընթերցեց Խաչիկ Խաչերը:

«Մեր բոլորիս Սարոյեանը» թեմաով բանխոսեց ԵՊՀ Բանասիրական գիտությունների պրոֆ. Սուրեն Դանիելյանը: Նա իր խոսքերում նշեց որ Սարոյանը աղմկոտ շունչ ուներ և համարյա նրա բոլոր ստեղծագործությունները ծոն էին մարդուն:

Արվեստաբան ժանեթ Լազարյանը պատմեց Իրանում Սարոյանի հետ հանդիպման իր հուշերից:

Յուզադրվեց «Զրույց Վ. Սարոյանի հետ» ֆիլմը:

Իսկ միության թատերախումբը՝ ղեկավարությամբ՝ Էդվին Սուլթանյանի ընթերցեց Վ. Սարոյեանի «Չէ՛յ, ո՞վ կա այդտեղ» պիեսը:

Ծրագիրը ավարտվեց միության «Անի» պարախմբի «Ես իմ անուշ Հայաստանի» պարով տկն. Էլգա Մինասյանի ղեկավարությամբ:

Սույն թվականի մարտի 1-ին, Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ բովանդակալից միջոցառում «Մուլորակի օրը» խորագրով: Աշխարհի տարբեր երկրներում ծնված ու ապրած, այսօր արդեն հայրենիք դարձած ճեմարանականները նախ տեսահոլովակների ուղեկցությամբ ներկայացրեցին իրենց ծննդավայրերի ստեղծման պատմական համառոտ ծագումնաբանությունը, նրանց տնտեսա-աշխարհագրական, քաղաքական և մշակութային առանձնահատկությունները, ընդգծելով տվյալ երկրում հայ գաղթօջախների հիմնադրման աղբյուրներն ու ազգային, մարզա-մշակութային կյանքը և հայկական եկեղեցիների, դպրոցների և միությունների առանձնահատկություններն ու դերը հայասպահայանման գործում: Ներկայացնելով ԱՄՆ-ը, Սիրիան, Մեծ Բրիտանիան, Իրանը, Իտալիան, Լիբանանը և Ֆրանսիան, համապատասխան երկրներից եկած սաները հանդես եկան ասմունքներով՝ տվյալ երկրի լեզվով: Հնչեցին գեղեցիկ դաշնամուրային կատարումներ, հայրենասիրական երգեր, ներկայացվեցին ժողովրդական պարեր, իսկ ծրագիրն ավարտվեց «Ես սիրում եմ իմ երկիրը» երգով բոլոր մասնակիցների կատարմամբ:

Իրանը ներկայացնող սաներից անհատական ելույթներով հանդես եկան իրանահայ սաներ Արինե Քեչիշյանը, Մարիամ Քեչիշյանը և Արիգա Ավանեսյանը: Արինեն դաշնամուրի ջազային գեղեցիկ կատարմամբ ներկայացրեց Փոլ Դեզմոնդի «Թեյք 5» ստեղծագործությունը, իսկ Մարիամն ու Արիգան ելույթ ունեցան պարսկերեն լեզվով գեղեցիկ ասմունքներով:

Օգտվելով առիթից հարցազրույց ունեցա ճեմարանի փոխտնօրեն տիկին Փափազյանի հետ, որը սիրով ներկայացնում էմ ստորև:

*Ներկայացեք, խնդրում եմ:*

Փափազյան Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի Ընդհանուր մանկավարժական և դաստիարակչական հարցերով փոխտնօրեն:

Խնդրում եմ համառոտ ներկայացնեք ճեմարանի ստեղծման գաղափարն ու հիմնական նպատակը:

-Գաղափարն հղացել է 1990-ականների նախօրեին՝ ներկայիս տնօրեն պարոն Աշոտ Ալիխանյանի կողմից: Առանձնահատուկ կարևորելով շնորհալի երեխաներին իրենց կարողություններին համապատասխան կրթությամբ ապահովելու խնդիրը, նպատակ դրվեց ստեղծելու գիտակրթական այնպիսի մի համալիր, որը կնպաստեր վեր հանելու ուսումնաստեմք երեխաների արժանիքները, բազմաբովանդակ ծրագրերով կբարձրացներ նրանց հոգևոր և մտավոր ունակությունները, և կպատրաստեր նորանկախ պետության բազմակողմանի կրթված առաջնորդներ և հասարակության լիարժեք անդամներ:

*Թղթակից՝ Հուսիկե Սաֆարյան*

Ի հարկե այն օրերին նման համարձակ որոշում իրականացնելը շատերի համար անհնար էր թվում, բայց պարոն Ալիխանյանի համառ ու համարձակ ջանքերի շնորհիվ 1990 թվականի մայիսին կառավարության մակարդակով հաստատվեց որոշումը և հիմնադրվեց օժտված և շնորհալի սաների դպրոցը, որն սկզբնական շրջանում կոչվում էր ազգային քոլեջ:

Մյուս համարձակ քայլը ուսումնական ծրագրում «Աստվածաբանության հիմունքներ» առարկայի պարտադիր ուսուցման հարցն էր, քանի որ անհնար էր պատկերացնել լիարժեք մարդու ձևավորումն առանց բարոյական կողմնակցների, որոնց աղբյուրն հենց աստվածաբանությունն է՝ իր պատվիրաններով, որն այն օրերին խիստ դժվարամարս էր կոմունիստական մտածողությամբ հասարակության համար:

Այդ հիմքով ճեմարանի տնօրենությունը հանդիպեց Ամենայն հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ին առարկայի ուսուցման համար համապատասխան մասնագետ տրամադրելու խնդրանքով: Վեհափառը, խանդավառությամբ ընդունելով և ողջունելով գեղեցիկ նախաձեռնումը, սիրով աջակցեց:

Անցումային ու անկայուն այդ տարիներին մեծ թափով սկսեցին ստեղծվել կրթօջախներ՝ քոլեջ անվան տակ, և որպեսզի տարբերվեր մեր հաստատությունը մյուսներից, ստացավ իր առաքելությանն արժանի անվանում և վերանվանվեց Անահիա Շիրակացու անվան ճեմարան:

Լսել ենք, որ Ձեր սաները հաղթանակներ են արձանագրել անգամ միջազգային և համաշխարհային օլիմպիադաներում, ի՞նչ կասեիք այդ մասին:

-Դա փաստ է. մեր սաները մասնակցել են մաթեմատիկայի և քիմիայի միջազգային և համաշխարհային օլիմպիադաներին և նվաճել են բրոնզե և արծաթե մեդալներ: Ունեցել ենք սան, որը լավագույն է ճանաչվել միաժամանակ հինգ առարկայական օլիմպիադաներում: Ճեմարանի 5 սովորողներ տարբեր տարիներին ճանաչվել են հանրապետության տարվա լավագույն աշակերտներ՝ ՏՏ բնագավառում և արժանացել են ՀՀ նախագահի կրթական պարգևին:

Ճեմարանի սաները շարունակ մասնակցել ենք Չեխիայում կազմակերպվող կերպարվեստի ամենամյա ցուցահանդես-մրցույթին և արժանացել անգամ «Լիդիցեի վարդ» ոսկե մեդալին:

*2007թ. դեկտեմբերին ճեմարանը պաշտոնապես դարձել է միջազգային բակալավորիատի դպրոցների միակ հավակնորդը Հայաստանում:*

*Ճեմարանն ունի բոլոր նախադրյալները՝ մոտ ապագայում դառնալու հանրակրթության համահայկական կենտրոն:*

Ե՞հիշտ է, արդյոք, որ Ձեզ մոտ սովորում են ոչ միայն հայեր (ներառյալ՝ սփյուռքահայերը), այլև օտարերկրացիներ: Ինչպե՞ս եք իրականացնում նրանց ուսուցումը:

- Օտարախոս սաների սկզբնական ուսուցումն իրականացնում ենք, օրինակ, Սիրիայից և Լիբանանից եկածների համար իրենց երկրի լեզուներով՝ թարգմանչի օգնությամբ, մյուսների՝ անգլերեն լեզվով, այնուհետև, ինչպես սփյուռքահայերի, նրանց համար նույնպես կազմակերպվում են հայերեն լեզվի անհատական պարապմունքներ՝ հատուկ ծրագրով, որի օգնությամբ մեկ տարի անց սանը, լիարժեք տիրապետելով հայոց լեզվին, կարող է շարունակել իր ուսումը հայերեն լեզվով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հարցազրույցն ընթերցելու է իրանահայությունը, եկեք

խոսենք իրանահայ սաների մասին: Քանի՞սն են նրանք այսօր և ի՞նչ առաջադիմություն են գրանցում: Խնդրում են, եթե հնարավոր է անվանապես ներկայացրեք նրանց:

-Այսօր Իրանից մեզ մոտ սովորում են վեց սաներ՝ Արիմե Քեշիշյանը, որն արժաթափայլ սան է, Արիգա Ավանուսյանը, Պարույր Դանիելյանը, իսկ այս տարի նաև Ադանա և Մարիամ Քեշիշյանները, որոնք փայլուն սաներ ճանաչվեցին:

Ե՞հիշտ է արդյոք, որ անհրաժեշտության դեպքում Ձեր սաներին ապահովում եք նաև հանրակացարանով: Ի՞նչ կասեք այդ առումով, ինչպիսի՞ն են հանրակացարանում ապրելու պահանջներն ու պայմանները: Քանի որ, կարծում եմ, տեղեկանալու դեպքում ուսման նկատմամբ բժախնդիր իրանահայ շատ ծնողներ կցանկանան իրենց երեխաներն էլ ուսանեն նման բարձրակարգ դպրոցում, եթե ունենան կացության ապահովության հավաստիք:

*- Մեր հանրակացարանը գտնվում է ճեմարանի փակ տարածքում՝ շուրջօրյա հսկողության տակ: Ունի կոմունալ-կենցաղային բավարար պայմաններ, իսկ սաների հետ կցվում են մանկավարժներ՝ նրանց կեցության ապահովության համար:*

Վերջերս Իրանում պաշտոնապես հաստատվեց «Իրան-Հայաստան բարեկամության ընկերություն»-ը, որի հինգ բաժիններից մեկը Մշակութային, տեխնիկական, կրթական ու հետազոտական բաժինն է: Ի՞նչ եք կարծում, կգտնվե՞ն արդյոք համագործակցության եզրեր այս միության հետ:

-Ինչպես վերը նշեցի, մեզ մոտ սովորում են թե հայեր և թե՛ օտարերկրյա քաղաքացիներ: Մեր դռները բաց են բոլոր ազգերի առջև, քանի որ երկրագունդը մի ընտանիք է, իսկ մեր նպատակն այդ ընտանիքի յուրաքանչյուր անդամի մտավոր և հոգևոր առողջ դաստիարակությունն է:

Դե ինչ, մաղթում եմ Ձեզ երկար տարիների առողջ մարմին, պրպտուն միտք և խաղաղ կյանք: Թող հավերժ հնչի Ա. Շիրակացու անունը փառքով կողո ճեմարանի օրհներգը և միշտ հպարտանանք Ձեր կրթօջախով, ինչպես հիմա: «Լույս» ամսագրի խմբագրական կազմը նույնպես շնորհավորում է Ձեզ և գիտակրթահամալիրի ողջ անձնակազմին՝ մաղթելով ամուր կամք և բարձր ոգի՝ ազգի արժանի առաջնորդներ պատրաստելու Ձեր լուսավոր ճանապարհին:

**«Լույս»-ի Թղթակից՝ Գայանե Աբգարյան**

**ԿՈՄԻՏԱՅԱՆ ՇՆՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԾՈՒՆ...**

Գարունը կրկին թևերն իր փռել, սարը ձնհալել, հողը արևի տաք հեքով բարուրել ու հալեցնում է սառույցը ձմռան, որ ամեն քնքուշ ծլարձակման հետ ճակատագրի նոր շիվ պիտ արձակի: Իսկ այդ շիվերը պահող սրտերին որքա՞ն հուզում պիտ գարունը բերի: Քանի՞-քանիսն են սիրով լցվելու: Չէ՞ որ գարնանածին ամեն նոր ծիլ իր կյանքի նոր շնչով լեցուն հույսի տոն է ու խնդություն: Կուզեմ ամեն մահկանացու, զոնե մի պահ հոգսերն իր բյուր սրտից, մտքից, հոգուց հանի, հեռու վանի ու իրանա գարնան ծիլ ու ծաղկի շնչով, նրանց գույն ու բույրով շենչող, որ հագենա, թեթևանա հոգին այն բուռ, որ ծանրացած քայլող մարմնում հյուսած իր բույնը, սպասում է դռան ետև: Կուզեմ բացվեն դռներն հոգու բարի, անշահ, նրա հեքով թափվեն մարմնից ամենայն ահ, և հիանցած աստվածակերտ երանգներով ցնձա հոգին, խնդա Աստծու հրաշքներով: Ո՞վ է տարել այս աշխարհից գանձերն իր, ո՞վ, որ երկրորդը ես լինեմ, կամ դու, բարեկամ: Ուրեմն եկ զոնե թողնենք անուն բարի, որ երբ գնանք՝ մնացողաց մի քիչ սգան:

Գարունն անտրտունջ թեւերն իր փռել, լեռը ձնհալել, հողն արևի ջերմ շնչով բարուրել ու հալեցրել է սառույցը սարի: Թող Աստված մեզ էլ կարողություն տա, որ մեր սրտերի ձյունն էլ ջուր դառնա, դառնա մի աղբյուր, աղբյուր մի սիրո, որ շնչենք, ապրենք ու կերտենք սիրով:

*Սիրով՝ ԳԱՅԱՆԵ ԱՐԳՈՒՅԱՆ*

**Չանագանք**

**ՊԱՍԻԿ ԾՆԵԼԸ ԵՎ ԱԿՏԻԿ ԾՆԵԼԸ  
ՆՈՒՅՆՔԱՆ ՎՏԱՆՁԱՎՈՐ ԵՆ**

Պասիվ ծխողները նրանք են, որ գտնվում են ծխողների շրջապատում:

Մարդ, որը երբևէ չի ծխել, կարող է մահանալ միայն այն պատճառով, որ այլոք ծխում են նրա ներկայությամբ:

Ծխել, թե չծխել՝ Դուք եք որոշում, բայց ծխելով ուրիշների ներկայությամբ, Դուք գրկում եք նրանց ընտրության հնարավորությունից՝ ստիպելով նրանց, որ պասիվ ծխողներ լինեն:

Առողջությունը համարվում է երջանիկ կյանքի հիմնական նախապայմանը: Այն պահպանելու համար անհրաժեշտ է ջանքեր գործադրել: Աշխարհում գիտաբժշկական միտքը նոր ուղիներ, նոր մեթոդներ է կիրառում մարդկանց առողջությունը պահպանելու համար և աշխատում է փոխել նրանց վերաբերմունքը իրենց իսկ առողջության նկատմամբ:

Մեր օրերում առողջապահական գիտելիքների ցածր մակարդակի և տեղեկատվության բացակայության պատճառով բնակչության մեծ մասը բավարար տեղեկացված չեն ծխելու վնասակարության և ծխախոտ օգտագործելու հետևանքների մասին:

Ծխելը վնասակար է գրեթե բոլորս՝ գիտենք, պասիվ ծխելը նույնքան վտանգավոր է, որքան և ակտիվ ծխելը, թեպետ հասարակության շրջանում տարակուսանք առաջացնի և ուշադրության չարժանանա և նույնիսկ արհամարվի: Եվ պետք է ասել թե ի՞նչպես չծխողներն անհոգ թույլ են տալիս ոմանց ծխել իրենց ներկայությամբ և մահացու վտանգի ենթարկել իրենց իսկ սեփական առողջությունը: Առաջին հերթին պետք է չծխողները պաշտպանեն սոցիալական և մշակութային փոփոխությունների անհրաժեշտությունը և դրա իրականացումը համար պետք է հասարակական պահանջարկ դառնա: Քանի որ ծխախոտային ծուխը ոչ միայն գրգռիչ ազդեցություն է թողնում, այլ նաև վտանգավոր է առողջության համար:

Մարդիկ չեն գիտակցում , որ պարտավոր են պաշտպանելու իրենց շրջապատ արտանետվող ծխախոտի ծխի վնասակար ազդեցությունից:

Ուստի ծխողները պետք է գիտակցեն, որ ծխելու համար կարելի է ընտրել ազատ տարածք և սահմանափակվի հասարակական վայրում ծխելը:

Ծխախոտի վնասակար հետևանքների մասին կարելի է շատ խոսել:

*Պատրաստեց՝ Ալվինա Բաղդասարյանը*

**ԲԱՆՁԱԿՆԵՑԻ ՎԵՐՋԻՆ ԸԱՅՆ**

«Երբ ես մահանամ, գուցե Կանադայում ապրող իմ երեք &supl;ուսուրերից մեկը վերադառնա եւ հայերի ներկայությունը այստեղ շարունակվի», «Ֆրանսապես» գործակալության լրագրողին հայտնել է յոթանասունն անց հայազգի Մայքլ Ջոզեֆ Մարտինը, որը համարվում է Դաքայում (Բանգլադեշում) ապրող վերջին հայը:

Մի ժամանակ նախկին խորհրդային Հայաստանից եւ այլ վայրերից ժամանած հազարավորների հաշվին կազմված գաղութը 1960-ականներից հետզհետե նոսրացել է, այժմ Մարտինը միակն է, որ կարող է հաճախել

մայրաքաղաքի հայկական եկեղեցին, որտեղ կաթոլիկ հոգեւորականն է արարողություններ վարում քրիստոնեական կարեւոր տարեթվերի առթիվ:

Մայքլը Դաքա է ժամանել 1942-ին՝ հետեւելով հոր օրինակին, որն ավելի վաղ էր հաստատվել այնտեղ: Ընդհանրապես հայկական համայնքը, ըստ «Արմինյն միորո սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդւթլ;ագրության, ձեւավորվել է 16-րդ դարից: Հայերը հիմնականում զբաղվել են ջուտի, կաշվի եւ համեմունքների առետւորով: Ջուտի ամենամեծ վաճառականն է եղել Դավիթ Ալեքսանդր;րը (19-րդ դար), իսկ Նիկոլաս Պետրոսի Պողոսը (հավանաբար՝ Նիկողոս Պողոսյան) 1830-ականներին հիմնել է Բանգլադեշի առաջին մասնավոր դպրոցը: Մահացել է 1876-ին: Հայերը եղել են նաեւ իրավաբաններ, զբաղեցրել հասարակական բարձր պաշտոններ: «Նրանք կարեւոր դեր են խաղացել երկրի տնտեսական կյանքում եւ հարգված քաղաքացիներ են եղել», նշել է Ֆրանսապրեսի լրագրողին Դաքայի համալսարանի դասախոս, պատմաբան Մունթասիր Մամունը, ավելացնելով, որ առաջին հայերը 16-17-րդ դարերում Թուրքիայից եւ Պարսկաստանից են հաստատվել այնտեղ եւ հյուրընկալվել նախ մոնղոլների, ապա նաեւ բրիտանացի գաղութարարների կողմից:

Մայքլ Մարտինը, որի իսկական անունն է Միքայել Հովսեփի Մարտիրոսյան, մտահոգված է հատկապես 1781-ին Արմանիտոլա (Հայկական) թաղամասում կառուցված Սուրբ Հարության եկեղեցու ճակատագրով, որի շրջակայքում գտնվող գերեզմանատանը թաղված են ավելի քան 400 հայեր, նաեւ իր կինը, որը մահացել է երեք տարի առաջ: Հողաթմբերի վրա կարելի է կար&supl;ալ Սարգիս, Մանուկ եւ Հարություն անունները:

«Հայկական համայնքը վատ ժամանակներ ունեցել է, բայց միշտ վերագտել է իրեն: Ես հանգիստ կկարողանամ աչքերս հավիտյան փակել այն ժամանակ, երբ տեսնեմ, որ մեկը սիրահոժար պահպանելու է մեր ժառանգությունը այստեղ», եզրափակում է իր խոսքը արդեն թուլակազմ եւ կռացած Մարտինը:

**ՔՐՈՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՄԱՆՂԱՏԵՐ  
ԿԱՏԱՆԱՆ ՆԱԵՎ ԸԱՅԵՐԸ**

Ըստ «Նոյյան տապանի», Հյուսիսային Իրաքի քրդական վարչակազմի խորհրդարանը որոշում է ընդունել նոր գումարման խորհրդարանում մանդատներ հատկացնել նաեւ հայերին: Հաղորդվում է, որ քրդական խորհրդարանի 2009-ի նիստում որոշում է ընդունվել 5-ական տեղ հատկացնել թուրքմեններին, քելդանիներին (քաղղեացիներ) եւ ասորիներին: Իսկ հայերի ստանալիք մանդատների թվաքանակի մասին որեւէ տեղեկություն չի հաղորդվում: Հյուսիսային Իրաքում խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենալու 2009-ի մայիսի 19-ին:

**ՄԱՒԱՅԵԼ Է ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԴՈՒՍՏՐԸ**

Փետրվարի 25-ին 98 տարեկան հասակում ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Փարդիս քաղաքում մահացել է հայ գրականության ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Դանիել Վարուժանի դուստրը՝ Վերոնիկա Սաֆրասյանը: Վ.

Սաֆրասյանը ծնվել է 1910 թվականի սեպտեմբերի 6-ին Սվազի Բրզնիկ գյուղում: Ըվեյցարիայում ուսում ստանալուց հետո 1930-ին նա տեղափոխվում է Ամերիկա: Մինչև թռչակի տարիքը՝ 1982 թ., նա աշխատել է ամերիկյան տարբեր գրադարաններում, հաղորդում է «Նոյյան տապանը»:

**ԻՐԱՔԻ ԲՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՓԱՂԹ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԴԵՊԻ ԳԵՐՄԱՆԻԱ**  
**Իրանահայ համայնքից հետո հերթը հասել է նաեւ իրաքահայերին**

«Ջայաստան» լրատու, Աթենք, 20.03.2009: Երեկ Սիրիայից, վարձակալությամբ վերցված օդանավով հարյուր քսան քրիստոնյա է տեղափոխվել Գերմանիա, սակայն դեռեւս պարզ չէ, թե նրանցից քանիսն են հայերը:

Բեռլինից ստացված լուրի համաձայն, ՄԱԿ-ի գաղթականների բարձրագույն հանձնաժողովը որոշել է Իրաքից հեռացնել 10.000 քրիստոնյաների՝ նրանց տեղափոխելով Գերմանիա, Շվեդիա եւ Եվրոպական այլ երկրներ: Գերմանիայի ներքին գործերի նախարարության խոսնակ Յենրիխ Յյուլբենը երեկ հայտարարել է, որ գաղթականների առաջին խումբը, թվով 120 հոգի, արդեն հասել է Գերմանիայի Յանովեր քաղաքը: Նա շեշտել է նաեւ, որ նրանց շուտով կմիանա գաղթականների երկրորդ խումբը: Վերջին 10 տարիների ընթացքում իրանահայ համայնքը գրեթե քայքայման է հասել մինչ օրս շարունակվող մասսայական գաղթի հետեւանքով, որի գլխավոր կազմակերպիչն է հրեական «Յիաս» (HIAS) կազմակերպությունը: (HIAS- Hebrew Immigrant Aid Society). (<http://www.hias-vienna.at/>).

1881 թ. հիմնադրված «Յիաս» կազմակերպությունը միշտ նվիրվել է Իսրայել հրեաների ներգաղթ կազմակերպելու աշխատանքին, իսկ այժմ իրականացնում է հայաստանամերձ հայկական համայնքների մասսայական գաղթ դեպի հեռավոր երկրներ՝ իբր մարդասիրական նպատակներ հետապնդելու մտադրությամբ:

«Յիաս»-ի այս գործունեությունը մինչև օրս իրանահայ համայնքի պատասխանատուների եւ ՀՀ իշխանությունների որեւէ գնահատականին չի արժանացել, միշտ էլ դրսևորվել է անտարբեր վերաբերմունք: \*

«Յիաս»-ը մինչ այժմ կազմակերպել է 4,5 միլիոն մարդու գաղթ:

**Նշվել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 188-րդ տարեդարձը**

ԵՐԵՎԱՆ, 3 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում ապրիլի 2-ին հանդիսավորությամբ նշվել է ճեմարանի հիմնադրման 188-րդ տարեդարձը՝ ազդարարելով նաեւ նոր ուսումնական տարվա սկիզբը: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ճեմարանից, բարիգալստյան եւ ողջույնի խոսքով ներկաներին դիմել է Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Ավետիս քին. Յամբարձումյանը:

Նա անդրադարձել է ճեմարանի անցած ուղուն՝ ընդգծելով, որ հայրենիքից հեռու հիմնադրված այս կրթական հաստատությունը միայն անցյալում արձանագրված հարուստ պատմությամբ չի ապրում, այլ այսօր նույնպես, շնորհիվ տեսչության բարեջան աշխատանքների եւ իրականացված բարեփոխումների՝ ճեմարանը կանգուն է եւ պատրաստ հաստատուն քայլերով դիմագրավելու մերօրյա

առաջ ընթացող եւ օրեցօր զարգացող կրթական ասպարեզի բոլոր մարտահրավերները: Տեր Հայրը նշել է նաեւ, թե որքան մեծ է Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի սերը, տեսական բարձր ուշադրությունն ու հետեւողականությունը Հայոց մարդասիրական ճեմարանի նկատմամբ:

Տարեկան գործունեության ամփոփիչ զեկույցով ելույթ է ունեցել ճեմարանի կառավարիչ Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Նա անդրադարձել է ճեմարանականների ցուցաբերած ուսումնական առաջադիմությանը, ձեռքբերումներին ու ապագա ծրագրերին, ուրախությամբ արձանագրել, որ ճեմարանի ղեկավարության եւ ուսուցչական կազմի ջանադիր աշխատանքի շնորհիվ այսօր մեծ ուշադրություն է դարձվում հատկապես կրթական մակարդակին եւ երեխաների բազմակողմանի զարգացվածությանը՝ վստահեցնելով, որ նախանձախնդրության նույն ոգով եւ ավյունով շարունակելու դեպքում մոտ ապագայում կլինի ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող ուսումնական հաստատություն եւ ամենակարեւորը՝ ուսյալ ճեմարանականներ:

Նա հայտնել է նաեւ վերջին տարիների Մարդասիրական ճեմարանի շրջանավարտների հաջողությունների մասին, որոնք այժմ շարունակում են ուսումը Կալկաթայի եւ Հնդկաստանի այլ քաղաքների տարբեր առաջադեմ կրթական հաստատություններում: Հայր Սուրբը շնորհավորել է նաեւ 2009 թ. ութ շրջանավարտներին, որոնք հաջողությամբ հանձնել էին իրենց պետական քննությունները: Օշական վարդապետն առանձնակի անդրադարձել է հատուկ շնորհակալություն է հայտնել Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամներին, որոնց մշտական հովանավորության եւ աջակցության շնորհիվ այսօր ճեմարանում բազմաթիվ նորոգություններ ու շինարարական աշխատանքներ են իրականացվել: Միջոցառմանը ներկա են եղել Կալկաթայի եկեղեցական վարչության անդամներ, Կալկաթայում ՌԴ փոխյուպատոսը, արտերկրից ժամանած հյուրեր, հնդկահայ համայնքի հավատացյալներ, ողջ ուսուցչական կազմը, աշխատակիցները եւ այլ հյուրեր:

**Ցավակցական**



Խորը վշտով համակված ցավակցություն ենք հայտնում Բեգխանյան ընտանիքին, բոլոր հարազատներին եւ իրանահայ համայնքին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**Գնդապետ Դոկտ. Վարդան Բեգխանյանի**

ցավալի մահվան առիթով, որը տեղի ունեցավ սույն թվականի ապրիլի 18-ին:

*Էդիկ եւ Թամար Բաղդասարյաններ*